

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԻՐԻԱԹԻ ՀԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՀԱՎԱՏԱՏԵՂԻՆԵՐԸ
ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Բազմաթիվ հեղինակավոր ուսումնասիրողների կարծիքով միջնադարյան Տավրիկայի (Ղրիմի) Սուլթաթ (Սուլթաթ, Սուլթաթ, Ղրիմ, էսկի Ղրիմ, ներկայումս Ստարի Ղրիմ) բնակավայրում դեռևս մինչև թաթարների հաստատվելը հայկական բնակչություն է գոյություն ունեցել¹: Խ. Փորքչեյանը գտնում է, որ Սուլթաթը հիմնադրել են հայերը և այն եղել է վերջիններիս բնօրրանը Ղրիմում²: Նույն կարծիքին է նաև Յու. Կուլակովսկին³: «Սուլթաթ» տեղանվան մեզ հասած վաղագույն հիշատակությունը վերաբերում է 1241 թ.⁴: Մ. Կրամարովսկու հավաստմամբ, հրեական աղբյուրներում այս տեղանվան առավել վաղ X-XII դդ. հիշատակություններ կան⁵: Սա նշանակում է, որ բնակավայրի մինչթաթարական ծագումն անվիճելի է, քանի որ թաթարները Տավրիկայում առաջին անգամ հայտնվել են միայն 1223 թ., այն էլ շատ կարճ ժամանակով⁶: Նրանց երկրորդ «այցելությունը» վերաբերում է 1239 թ., որոշ տվյալներով 1237 թ.⁷:

Սուլթաթը գտնվում էր թերակղզու հարավ-արևելյան կողմում, երկու ցածր լեռնաշղթաների միջև ընկած հովտում: Նույն հովտում էր գտնվում նաև Կազարաթ (Կազարիա) բնակավայրը, որի անունն արդեն խոսում է այնտեղ խազարների բնակության մասին⁸: Խ. Փորքչեյանի կարծիքով,

1 А. Л. Бертье - Делагард. Исследования некоторых недоуменных вопросов средневековья в Тавриде. — Известия Таврической ученой архивной комиссии (ИТУАК), N 57, Симферополь, 1920, с. 104; А. Л. Якобсон. Армянская средневековая архитектура в Крыму. — Византийский временник, 1956, N8, с. 168; А. Л. Якобсон, Ю. А. Таманян. Армянская архитектура Крыма. Ереван, 1992, с. 8; А. Л. Якобсон. Средневековый Крым. М. — Л., 1964, с. 83.

2 Խ. Ա. Փորքչեյան. Ե՛րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ. — «Պատմաբանասիրական հանդես», 1962, N2, էջ 115:

3 Ю. Кулаковский. Прошлое Тавриды. Киев, 1914, с. 67.

4 М. Г. Крамаровский. Солхат-Крым. К вопросу о населении и топографии города в XII—XIII вв.-В сб.: Итоги работ археологических экспедиций Государственного Эрмитажа. Л., 1989, с.142.

5 Նույն տեղում, էջ 143:

6 В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. I. Извлечения из арабских источников. СПб., 1884, с. 25—26; Заметки XII—XIV века, относящиеся к крымскому городу Сутдее (Судак), приписанные на греческом Синаксаре. — Записки Одесского общества любителей истории и древностей (ЗООИД), Одесса, 1863, N 5, с. 601.

7 О. Домбровский, В. Сидоренко. Солхат и Сурб-Хач. — В сб.: Археологические памятники Крыма. Симферополь, 1978, с. 21; Տե՛ս նաև ЗООИД, т. IV, 1858, с. 92.

8 Մ. Բժշկեան. Ծանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց նախնեաց Անի քաղաքին. Վենետիկ, 1830, էջ 328:

9 Ք. վրդ. Քուչնեբրյան. Պատմություն գաղթականության իրիմու հայոց. Վենետիկ, 1830, էջ 91: А. Л. Якобсон. Армянская средневековая ар-

Հայկական Սուրխաթի և խազարական ավանի մերձավորութիւնը վկայում է X-XI դդ. այս երկու ժողովուրդների առևտրատնտեսական համագործակցութեան մասին նաև Տավրիկայում, քանի որ նմանօրինակ համագործակցութիւն, Բ. Միլլերի Հավաստմամբ, գոյութիւն ունէր արևելքում մերձ-վոլգյան տարածքներում ապրող և մետաքսի առևտրի մեջ ներգրավված Հայերի և խազարների միջև¹⁰:

XIII դ. 60-ականներին Տավրիկայի Հարավ-արևելյան ափերին իրենց առևտրական դադութիւններն են հիմնում ջենովացիները¹¹: XIII դ. 80-90-ականների ջենովական աղբյուրները վկայում են, որ Սուրխաթի և Կադա-րաթի հայերը իրենց մասնակցութիւնն են բերել սև և միջերկրածովյան առևտրին¹²: XIII դ. երկրորդ կեսին նույն հովտում տեղակայվել է Ոսկե Հորդայի Ղրիմի ուլուսի վարչական կենտրոնը: «Սուխաթում» բնակվող ջուզիդյան վարչակարգի տեղապահին Հանդիպում ենք արդեն 1263 թ. մի հիշատակութեան մեջ¹³: XI¹ դ. թաթարական արաբատառ փիմագրերում վարչական կենտրոնը հանդես է դալիս «Ղրիմ» անունով¹⁴: Հայկական ձեռագրերում «Սուրխաթ», «Սուլխաթ», «Սուրդաթ», ինչպես նաև «Ղրիմ» անուններով¹⁵, ջենովական փաստաթղթերում «Սուկաթ», «Սուդաթ» ձևափոխութիւններով¹⁶: Պարսկական և արաբական աղբյուրներում կիրառվում է և՛ Սուրխաթ անվանումը «Սուխաթ», «Սուխադ» գրութեամբ, և՛ Ղրիմը¹⁷: Իբն Բիբիի «Սելջուկ Նամե» քրոնիկը (1282-85թթ.) վկայում է, որ 1260-ականներին Բերկե խանը «Սուխադը և Սուդակը», որպես Հարկատու բնակավայրեր, հանձնել է Իկոնիայի սնանկացած սուլթան Քեյքաուսին¹⁸: Ուլադրուսթիւն դարձնենք այն հանդամանքին, որ Ռաշիդ-ադ-Դիևի նախորդից ընդամենը երկու տասնամյակ հետո գրված աշխատութեան մեջ (1300-1311թթ.) Քեյքաուսին հանձնված բնակավայրը Ղրիմն է¹⁹: 1280-81թթ. շատ կարճ ժամանակով սուխաթյան դահին է բազմել սուլթանի որդին՝ Գիյաս-ադ-Դինը²⁰: Այսինքն մինչև XIII դ. 80-ականների սկիզբը Սուրխաթին տիրել են սելջուկները:

XIV դ. 30-ականների աղբյուրները Սուրխաթ-Ղրիմը ներկայացնում են որպես բազմամարդ, հոչակավոր, բարետես և հարուստ մայրաքաղաք,

хитектура в Крыму, с.168; А. Л. Я к о б с о н, Ю. А. Т а м а н я н. Указ. соч., с. 7—8.

10 *Խ. Ա. Փ ո Ր ք Ն Ե Յ Ա Ն. Նշվ. աշխ., էջ 113 և 115:*

11 В. Г е й д. Итальянские колонии на побережье Черного и Азовского морей. Извлечения из сочинения В.Гейда.—История торговли Востока в средние века. Перевод Л. П. Колли. Симферополь, 1915, с. 8—9.

12 Հայ-իտալական առևտրութիւններ. Ջենովական աղբյուրները դրիմահայերի մասին, կազմեց, նախաբանը և ծանոթագրութիւնները գրեց Վ. Միքայելյանը. Երևան, 1974, էջ 21, 25, 26: О. Д о м б р о в с к и й, В. С и д о р е н к о. Указ. соч., с. 40.

13 М. Г. К р а м а р о в с к и й. Указ. соч., с.143.

14 О. А к ч о к р а к л ы. Старокрымские и Отузские надписи XIII—XIV вв.—Известия Таврического общества истории, археологии и этнографии. Т. I, Симферополь, 1927.

15 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 253, 286, 340, 341, 348, 349, 350, 358 և այլն:

16 G. B r a t i a n u. Actes des notaires Genoises de Pera et de Caffa de la fin du treizieme siecle (1281—1290). Bucarest, 1927.

17 В. Г. Т и з е н г а у з е н. Сборник материалов..., т. I, с.280; о н ж е. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. Т. II. Извлечения из персидских сочинений... М.—Л., 1941, с.26, 71, 73.

18 В. Г. Т и з е н г а у з е н. Сборник материалов..., т. II, с.26.

19 Նույն տեղում, էջ 73:

20 Նույն տեղում, էջ 26:

առևտրական ճանապարհների կարևորագույն հանգույց²¹: «Սուլխաթ» տեղանունը էպիգրֆիկ ձևով կիրառել են նաև իրենք թաթարները և այն էլ պետական մակարդակով: Այդ են վկայում վերջերս հայտնաբերված XIII դարի վերջի թաթարական մի քանի մետաղադրամները, որոնց վրա ընթերցվում է դրամների հատման վայրը՝ Սուլխաթ²²: Թաթարների կողմից այս անվան կիրառության որևէ այլ օրինակ հայտնի չէ: Թաթարական վիճակագրություն, ինչպես նաև հետազոտված հատված մետաղադրամների վրա այս անվանումը բացակայում է: Ամենուր օգտագործվում է վարչական կենտրոնի «Ղրիմ» անվանումը²³: Եղել են ուսումնասիրողներ, որոնք նույնիսկ ենթադրել են, թե սրանք տարբեր բնակավայրեր են²⁴: Այն, որ Սուլխաթն ու Ղրիմը ներկայացնում են միևնույն քաղաքը, ապացուցվում է զանազան տեղեկությունների համադրմամբ²⁵, հայկական աղբյուրները այս երկու անունները դնում են կողք կողքի և մատնանշում միևնույն քաղաքը. «Արդ, գրեցաւ ի թվականիս հայոց 926. (1336), ի մայրաքաղաքս ի Սուլխաթս, որ Ղրիմ կոչի...»²⁶: Մեկ այլ հիշատակարանում ասվում է. «Կատարեցաւ լէճէնթա սրբոյն Փրանցիսկոսի ձեռամբ Ասլանիս Արղրումցոյ, ի մայրաքաղաքս Սուլխաթ, որ կոչի Ղրիմ...»²⁷:

XIV դ. երկրորդ կեսի և XV դ. աղբյուրներում, այդ թվում և հայկական, քաղաքի «Ղրիմ» անվանումը դառնում է տիրապետող և աստիճանարար դուրս է մղում «Սուլխաթը»²⁸: XVI-XVII դդ. աղբյուրներում բնակավայրը հազվադեպ է հանդես գալիս և այն էլ բացառապես «Ղրիմ» անունով, իսկ XVIII դ. «Էսկի Ղրիմ», «Ստարիյ Ղրիմ» (Հին Ղրիմ) անուններով²⁹: XV-XVI դդ. աղբյուրներում «Սուլխաթ-Սուլխաթ» տեղանունը ստանում է առավել ընդգրկուն իմաստ և կիրառվում թերակղզու ողջ հարավ-արևելյան տարածքի նկատմամբ:

XV դ. կեսերին Ոսկե Հորդանի քայքայումից և Ղրիմի խանությունից ստեղծումից հետո մայրաքաղաքը տեղափոխվում է Բախչիսարայ, և Սուլխաթ-Ղրիմը սկսում է անկում ապրել: 1453թ. թուրքերը տիրանում են Բոսֆոր և Դարդանել նեղուցներին, ինչը կործանարար ազդեցություն է ունենում սեծոպյան առևտրի վրա³⁰: 1475թ. թուրք-թաթարական համատեղ ուժերը թերակղզուց քշում են ջենովացիներին: Այս հաղթանակի համար Ղրիմի խանությունը վճարում է իր անկախությունը, հայտնվելով վասալական կախման մեջ թուրքիայից: Արդյունքում կտրուկ կրճատվում է առևտուրը, քայքայվում տնտեսությունը ողջ թերակղզու տարածքում: Արդեն XV-XVIII դդ. աղբյուրներում Ղրիմը կամ Էսկի Ղրիմը ներկայանում է որպես գյուղ³¹: 1778թ. ռուսական կառավարությունը իրականաց-

21 В. Г. Тизенгаузен. Сборник материалов..., т. I, с. 280; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 358, 369-370, 399, 456:

22 М. Г. Крамаровский. Указ. соч., с. 143.

23 О. Акчокраклы. Указ. соч., с. 7.

24 Նույն տեղում:

25 О. Домбровский, В. Сидоренко. Указ. соч., с. 16, 23.

26 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 286:

27 Նույն տեղում, էջ 443:

28 Նույն տեղում: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մաս Ա, կաղմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1955:

29 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ. մաս Ա, կաղմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան. Երևան, 1974, էջ 176. մաս Բ, 1978, էջ 42, 858: Հ. Սուլխաթյան. Ղրիմի հայոց վանքը. — «Մուրճ», N 6, 1904, էջ 74: Центральный государственный архив Крыма (ЦГА Крыма). Материалы фонда N 67.

30 Վ. Ա. Միքայելյան. Ղրիմահայոց պատմություն. Երևան, 1989, էջ 97, 102:

31 Барбаро и Контарини о России. Л., 1971, с. 35; Վ. Ա. Միքայելյան. Նշվ. աշխ., էջ 42: Հ. Սուլխաթյան. Նշվ. աշխ., էջ 74: Ж. Р. о о м. Путешествие в Крым в 1786 году. Л., 1941, с. 47.

նում է Ղրիմի քրիստոնյաների հայերի և հույների արտագաղթը թերակղզուց: Տեղահանված ղրիմահայերը հաստատվում են մերձգոնյան տափաստաններում: Ղրիմը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո արտագաղթվածների մի փոքրաթիվ մաս ետ է վերագառնում Ղրիմ: XIX դ. սկզբում Հին Ղրիմում վերաբնակված հայերի համար ստեղծվում է քաղաքային ինքնավարություն: Պավել I-ի կողմից 1799 թ. ստորագրված հրամանագիրը Հին Ղրիմի հայերին ռատուչա (դատարան) ունենալու հնարավորություն էր տալիս: Ռատուչան բացվում է 1809 թ. և գոյատևում մինչև նույն դարի 70-ականները:

XIV դ. Սուրխաթում գրված հայկական ձեռագրերի հիշատակարանները վկայում են, որ հայերն այստեղ առանձին թաղամաս են զբաղեցրել, որը կոչվել է Վերին Հողետներ, Վերնաբնակ հողահարկյա հայաժողով թաղ կամ ձղբնիս. «... ի Հայոցն թուականի ՉԼԷ. (1348) եղև գրաւ գրչութեան սրբոյ աւետարանիս ձեռամբ Աւետիս սարգաւաղի՝ նուաստ և յետին գրչի, յաշխարհս Հոնաց, որ այժմ Ղրիմ յորչորջի, ի հռչակաւոր և ի հոյակապ քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի հողետներս վերի, որ ձղբնիս անուանի, առ ոտն Սուրբ Խաչիս...»³²: «...եղև սկիզբն և կատարումն սորա ի մեծահռչակ, բաղմամարգ, յոլովածողով գանձունակ բարելի քաղաքս Սուրխաթ կոչեցեալ Ղրիմ, ի վերնաբնակ, հայաժողով թաղս հողայարկեալ...»³³:

Մ. Բժշկյանը, 1820-ականներին գրված իր աշխատության մեջ, նկարագրելով էսկի Ղրիմը, հենց քաղաքի ներսում հիշատակում է մի տափարակ, իր բառերով՝ գաշտ, որի տարբեր կետերում կիսավեր կամ հիմնավեր հայկական չորս հոգևոր կառույցներ են եղել. «Այս դաշտը թուր լինել տեղի եկեղեցեաց և ժամատանց, ուր այժմ բացի յաւերակաց և ի գերեզմանաց ոչինչ երևի...»³⁴: Վ. Միքայելյանը գտնում է, որ Վերին Հողետները կամ ձղբնիսը գտնվել է հենց Սուրխաթում³⁵:

Փորձենք պարզել հայոց թաղի տեղը քաղաքում: Հին Ղրիմ քաղաքը ունի բավականին բարդ դիրքադրություն: Այն տարածվում է դեպի արևելք և հարավ-արևելք իջնող թեք, կտրտված ռելիեֆի վրա: Տափարակը, որի վրա ժամանակին գտնվել են Բժշկյանի հիշատակած եկեղեցիները, քաղաքի մյուս թաղամասերի համեմատությամբ ունի բարձր գիրք: Առաջինը այս հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել Մ. Կրամարովսկին: Խոսելով «Վերին Հողետների», այնտեղի եկեղեցիների, ինչպես նաև հնադուլյն քարտեզներում էսկի Ղրիմի հյուսիս-արևմտյան կողմում նշված եկեղեցիների մասին, նա թուղցիկ նշում է. «Վերին Թաղերն էլ հենց պատկանում են քաղաքի հյուսիս-արևմտյան հատվածին»³⁶: Քննվող հարցի առիթով կրկին դիմենք XIV դ. Սուրխաթում կամ Ղրիմում գրված հայերեն մի քանի հիշատակարանների.

«Արդ, գրեալ եղև յաշխարհս Հոնաց, ի հռչակաւոր քաղաքս Սուրխաթ, ընդ հովանեաւ տաճարիս սրբոյ Սարգսի, ի Հողետներս վերի»³⁷: «Բայց դրեցաւ սա յաշխարհիս Հոնաց և յերկիր Խրրիմի, ի հոյակապ և ի հռչա-

* Հին Ղրիմի քաղաքային ռատուչայի հիմնադրման պատմությունը և գործունեությունը մանրամասն ուսումնասիրել է Վ.Ա. Միքայելյանը (տե՛ս Վ. Ա. Միքայելյանի նշվ. աշխ., էջ 248-253):

32 Ժ. Գաբրի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 369-370:

33 Նույն տեղում, էջ 456:

34 Մ. Բժշկյան, նշվ. աշխ. էջ 322-323:

35 Վ. Ա. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 38:

36 Մ. Գ. Կրամարովսկի. Указ. соч., с. 146.

37 Ժ. Գաբրի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 460:

կաւոր քաղաքիս, որ կոչի Սուրխաթ, ի Հողետներս վերի, առ ոտն սուրբ Աստուածածնին, և սրբոյն Սարգսի զաւրավարի, և այլ ըզմահաւաք սրբոց»³⁸ : «...ի մայրաքաղաքիս Սուրխաթ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Գրիգորի Լուսաւորչի... գրեցաւ...սուրբ աւետարանս...»³⁹ : «...Բայց գրեցաւ սա ի քաղաքս Ղրիմ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկային...»⁴⁰ : Հիշատակարաններից մեկի հեղինակը պարզապէս թվարկում է Սուրխաթի հայկական եկեղեցիները. «Կատարեցաւ սա... ի հռչակաւոր քաղաքս Սուրղաթ, ի զաւառիս Ղրիմ, առ ոտս սուրբ Ստեփաննոսի, և սուրբ Աստուածածնին, և սուրբ Լուսաւորչին, և սուրբ Գէորգեայ, և սուրբ Սարգսի...»⁴¹ :

Այսպիսով, գրիչներն իրենց բնակութեան վայր են համարում հենց Սուրխաթը : Սուրխաթի բնակիչները, Վերնաբնակ հայաժողով թաղը կամ Վերին Հողետները տեղադրում են հենց Սուրխաթ քաղաքի մեջ : Ելնելով հիշատակարանների ընձեռած տեղեկություններից, կարող ենք հաստատապէս ասել, որ Սուրխաթի նույն հայաբնակ թաղամասի տարածքում կանգնած են եղել Ս. Աստվածածին, Ս. Սարգիս եկեղեցիները և մի քանի այլ կառույցներ, որոնց թվում՝ Ս. Ստեփանոս, Ա. Գևորգ և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիները : Ուրեմն, Վերին Հողետների տեղը որոշելու համար հիմք ունենք կողմնորոշվելու հոգևոր կառույցներով, այսինքն՝ հայոց թաղը փնտրել այնտեղ, ուր կանգնած են եղել վերոհիշյալ եկեղեցիները : Այդ նպատակով բերենք Մ. Բժշկյանի հետևյալ նկարագրությունը. «Ի մուտս քաղաքին (Սուրխաթ կողմից-Տ.Ս.) երևին մեծ ավերակք կրկին մզկիթաց, և երկու ավերակք մեծ եկեղեցեաց Հայոց. որք թուին լինել մեծագործ ուղղանկրւնի եկեղեցիք զմբթաւորք... Այժմեան (ի նկատի ունի գործող-Տ.Ս.) եկեղեցի է հնաշէն և անշուք կառուցեալ քարրնկեց մի հեռի ի դաշտին յանուն սուրբ Աստուածածնի... Տեսաք ի սմին դաշտի երկու աւերակս եկեղեցեաց. վերինն է յանուն սրբոյ Կարապետին և ստորինն սրբոյն Ստեփանոսի, որոնց միայն որմունք կանգուն կան... Առաւել մեծաշէն էր եկեղեցի Լուսաւորչին ի ծայր դաշտին, մերձ ի շուկայն...»⁴² :

Միջնադարյան հայկական ձեռագրերում և Բժշկյանի նկարագրությունում մեջ հիշատակվող եկեղեցիների անունները հիմնականում համընկնում են : Հետևաբար, Բժշկյանի նկարագրած դաշտը իրենից ներկայացրել է հենց միջնադարյան Վերին Հողետների տարածքը : Այսօրվա տեղագրությունը միջնադարյան Վերնաբնակ հայաժողով թաղամասը կամ ձորքնիսը ներառել է քաղաքի այժմյան Օսիպենկոյի և Կոսենկոյի փողոցներն ամբողջութեամբ, ինչպէս նաև Սվոբոդա և Սովետսկայա փողոցների վերին հատվածները, քանի որ հենց այս տարածքում, մինչև 1941 թ., դեռևս կանգուն են եղել, ինչպէս կտեսնենք ստորև, երեք հայկական եկեղեցիներ : Բժշկյանի նկարագրության իսկությունը հաստատում է Ա. Մարկևիչը : 1892 թ. լույս տեսած նրա հոդվածը այս առումով չափազանց կարևոր նշանակություն ունի : Ա. Մարկևիչը առանձին կետերով ներկայացնում է Հին Ղրիմի քրիստոնեական և մահմեդական հուշարձանները : Բնական է, որ մոտ 70 տարի հետո վերը նկարագրված կիսավեր կառույցներն արդեն լրիվ քայքայված են եղել : 1. և 2. կետերում նա բերում է քաղաքի մուտքի մոտ գտնվող երկու հայկական եկեղեցիները : Երկուսի շրջակայքում էլ եղել են գերեզմանոցներ : Տապանաքարերի մեծ մասի վրա հայատառ վիմագրեր են եղել : 3. կետում նկարագրվում է շուկայի մոտ գտնվող կիսավեր շինությունը, ըստ Բժշկյանի՝ Լուսավորչի եկեղեցին : Նախորդ նկարագրությանը անծանոթ հեղինակը ենթադրում է, թե գա ժամանակին մզկիթ

38 Նույն տեղում, էջ 518:

39 Նույն տեղում, էջ 350:

40 Նույն տեղում, էջ 421:

41 Նույն տեղում, էջ 418 – 419:

42 Մ. Բ ժ շ կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 322 – 323:

է եղել, բայց նշում է, որ, ըստ տեղացիների Հաղորդած տվյալների, դրա շուրջը Հայատառ վիմագրերով տապանաքարեր են եղել: 4. կետում ներկայացվում են երկու եկեղեցիներ՝ գործող եկեղեցին, այսինքն Ս. Աստվածածինը և դրանից քիչ հեռու գտնվող միանավ եկեղեցին, հավանորեն Ս. Կարապետ, որը բնակիչների մի մասը ներկայացրել է որպես հունական, մյուս մասը որպես հայկական՝ մատնանշելով դրա շուրջ եղած Հայերեն գրերով տապանաքարերը⁴³: Մարկեիչի այցելության ժամանակ Հայերի քաղաքային ինքնավարությունն արդեն վերացվել էր: Տեղի էր ունեցել բնակչության զգալի մեխանիկական աճ: Նորաբնակները իրենց տները կառուցելու և տնտեսությունը կազմակերպելու ընթացքում տարել էին ինչպես գերեզմանոցների, այնպես էլ հնագույն ավերակների քարերը, քանդել էին հնագույն հուշարձանները: «Ղրիմում ոչ մի տեղ,- գրում է Ա. Մարկեիչը,- հին կառույցների ճակատագիրը այնչափ ողբերգական, այնչափ բախտորոշ չի եղել, ինչպես Հին Ղրիմում»⁴⁴:

Քաղաքը ժամանակին շրջապատված է եղել պաշտպանական համակարգով՝ հողապատնեշով և խանդակով: Ա. Բերտյե-Դելագարդի համոզմամբ, խանդակը կառուցվել է հողապատնեշից առաջ, քանի որ հակառակ հերթագայությունը ենթադրում է ռազմաինժեներական կոպիտ սխալ⁴⁵: Ուսումնասիրողների հիմնական մասը գտնում է, որ «Ղրիմ» տեղանունը առաջացել է թաթարերեն «КЫРЫМ»-փոս, խորխորատ բառից և այն կապում քաղաքը շրջապատող խանդակի հետ. այսինքն թաթարական վարչական կենտրոնը, այն շրջապատող խանդակի պատճառով, կոչել են «Ղրիմ» անունով, որն էլ հետագայում տարածվել է ողջ թերակղզու վրա⁴⁶:

Ղրիմին առնչվող մեզ հասած բազմալեզու և բազմաբնույթ պատմական նյութից միայն հայկական մեկ աղբյուրում է խոսվում այդ խանդակի կառուցման մասին: Մեծանուն գրիչ Նատերի որդի, Սուրխաթի բնակիչ գրիչ Ստեփանոսը 1363 թ. գրում է. «Ի սոյն ժամանակի շփոթումն գոյ վրդովման յաղազս մարմնական աշխարհակալաց, զի գլուխ թագաւոր ոչ գոյ, որ առնէ խաղաղութիւն, ըստ տեառն բանի բաժանեալ թագաւորութիւն ոչ հաստատի, սակս որոյ պետ քաղաքիս փոս հատանէ, խորխորատ փորէ շուրջ քաղաքաւս, և բազում տունք հիմն ի վեր առնէ, և աւերմունք անթիւ, և ամենայն ոք յերկիւղի է...»⁴⁷: Ուրեմն, խորխորատը սկսել են կառուցել 1363 թ., այսինչ քաղաքի «Ղրիմ» անվանը հանդիպում ենք շատ ավելի վաղ գրված բազմաթիվ աղբյուրներում: Թերակղզու «Ղրիմ» անունը հանդես է գալիս շատ առաջ: Քաղաքի շուրջ որևէ այլ, ավելի հին խանդակ հայտնի չէ, և եթե այդպիսին լիներ էլ, բնականաբար, ավելի հեշտ կլիներ վերականգնել հինը, քան կառուցել նորը: Ուրեմն, քաղաքի անունը որևէ կապ չունի այն շրջապատող խանդակի հետ: Ինչ վերաբերում է թերակղզու «Ղրիմ» անվանը, ապա դրանում, հավանորեն, արտացոլված է Պերեկոպի խանդակը⁴⁸: Հավանորեն, թաթարների պատկերացմամբ, Տավրիկան եղել է մի երկիր, որը տարածվել է այդ հիմնական խորխորատից այն կողմ: Ստեփանոսի հիշատակարանը հաստատում է Ա. Լ.

43 А. Маркевич. Старокрымские древности. – ИТУАК, N17, Симферополь, 1892, с. 125.

44 Նույն տեղում, էջ 124:

45 А. Л. Бертье-Делагард. Указ. соч., с. 91, 98.


46 В. Смирнов. Крымское ханство под верховенством Оттоманской порты до начала XVIII столетия. СПб., 1887, с. 20–23; А. Гаркави. О происхождении некоторых географических названий местностей на Таврическом полуострове. – Известия русского географического общества (оттиск). СПб., 1875, с. 54.

47 ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 460:

48 О. Домбровский, В. Сидоренко. Указ. соч., с. 19.

Բերտյե-Դելագարդի եզրակացութիւնը խանդակը հողապանեչից ավելի վաղ կառուցած լինելու վերաբերյալ. քաղաքը խորխորատով շրջապատելու համար բազում տներ են քանդել, որոնք պարիսպների գոյութեան դեպքում դրանցից ներս կգտնվեին և ոչ մի կերպ չէին կարող հայտնվել խորխորատի ճանապարհին:

Հիմնվելով հնագույն քարտեզագրական նյութերի վրա, Մ. Կրամարովսկին կազմել և հրատարակել է քաղաքի XIV-XV դդ. հատակագիծը (նկ. 1): Այն պարզորոշ ցույց է տալիս, որ ղիտարկվող երկու եկեղեցիները կանգնած են եղել քաղաքի պաշտպանական համակարգից դուրս, բայց քրիստոնեական, հենց հայկական թաղամասի տարածքում: Ակնհայտ է, որ



Նկ. 1

խորխորատը անց են կացրել հայոց թաղի միջով և բաժանել այն երկու մասի: Արդյունքում՝ երկու հայկական եկեղեցիներ մնացել են պաշտպանական համակարգից դուրս և հայտնվել քաղաքի Սուրխաթի ճանապարհի կողմն ուղղված դարպասի մոտ: Եկեղեցիների միջև տարածված են եղել բնակելի կացարանները, որոնց մի մասը քանդվել է խորխորատի կառուցման պատճառով, ինչի առիթով էլ հենց վրդովվում է գրիչը: Փաստորեն, միևնույն թաղամասի տարածքում կանգնած են եղել վեց հայկական եկեղեցիներ՝ Ս. Աստվածածինը, Ս. Ստեփանոսը, Ս. Կարապետը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, ինչպես նաև քաղաքային դարպասներից դուրս մնացած երկու եկեղեցիները: Ակնհայտ է, որ այս երկու, ըստ Մ. Բժշկյանի, խոշոր գմբեթավոր եկեղեցիներից մեկը եղել է Ս. Սարգիսը:

Ոսկե Հորդանի քայքայման ընթացքում քաղաքը պաշտպանական համակարգով ամրացնելու անհրաժեշտություն է ծագում, քանի որ սկիզբ առած միջֆեոդալական բախումները սպառնում էին նրան: Նախորդ հիշատակարանում նկարագրված դեպքերից ընդամենը երկու տարի հետո,

1365 թ., Ղրիմ քաղաքի թաթար տեղապահ, Մամայի մոտալուտ հարձակումից սարսափահար, լքելով տեղի և շրջակա բնակավայրերի՝ մայրաքաղաքում ապաստանած բնակչությանը, փախչում է⁴⁹։ Ուլուսի կենտրոնը հանձնվում է Մամայ խանին։ Նույն Ստեփանոսի վկայությամբ, 1368 թ., գրավումից երեք տարի անց, քաղաքում սարսափելի սով է սկսվում, որի զոհն են դառնում «անհամար և անթիւ ոգիս, որ և գրելոյ անկար է»⁵⁰։

Որեւէ կասկած լինել չի կարող, որ Մ. Բժշկյանի հիշատակած եկեղեցիները հին են և նույնն են, ինչ որ միջնադարյան ղրիմահայ ձեռագրերում նշվածները։ Ինչպես ասվեց, Ոսկե Հորդայի քայքայման շրջանում (XIV-XV դդ.) և հատկապես XV դ. առաջին կեսին Սուլթանթ-Ղրիմը այնպիսի ծանր շրջան է ապրում, որ եկեղեցաշինությունը զբաղվելու հնարավորություն չկար։ Բացի այդ, թաթարները նման շինարարություն թույլ չէին էլ տա, քանի որ մահմեդականությունը արդեն հասցրել էր խոր արմատներ գցել նրանց մեջ։ Ղրիմի խանության արքունիքի տեղափոխումից հետո քաղաքը արագ թափով անկում է ապրում, բնակչությունը, ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա, կրճատվում է, և հայերը, իրենց տրամադրության տակ ունենալով բազմաթիվ հոգևոր կառույցներ, նորերը կառուցելու հնարավորությունը և կարիքը չունենին։ 1475 թ. թուրք-թաթարական համատեղ ռազմական գործողությունների հետևանքով թերակղզու քրիստոնեաբնակ քաղաքներն ու գյուղերը այնպիսի ավերածություն մատնվեցին, որ բնակչությունը դեռևս երկար ժամանակ ուշքի չէր դալիս։ Թուրքիայից վասալական կախման մեջ հայտնված Ղրիմում մինչև XVII դ. սկիզբը քրիստոնյաները աննախադեպ հալածանքի էին ենթարկվում⁵¹, այնպես որ դիտարկվող հուշարձանները այս շրջանում էլ չէին կարող կառուցվել։ XVII-XVIII դդ. թերակղզու տարածքում համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին տնտեսության զարգացման համար, բայց այս շրջանում էլ էսկի Ղրիմը ձեռք չբերեց իր երբեմնի նշանակություն փոքր մասն անդամ։ Ժիլբեր Ռոմի վկայությամբ, XVIII դ. վերջին էսկի Ղրիմը ներկայանում էր սակավաթիվ թաթարներով բնակեցված կիստվեր քաղաքի տեսքով⁵²։

Քաղաքի տերուտնորենը դարձած թաթարները ձեռք չեն տվել արդեն կանգուն հուշարձաններին⁵³։ Իրավացի է Վ. Միքայելյանը, ասելով, թե Ղրիմի հայկական եկեղեցիներն ու վանքերը գործել են հենց «մահմեդական հոգևորականության քթի տակ, որը ուզեր-չուզեր պիտի հանդուրժեր այդ երևույթը, եթե չէր կամենում զրկվել հայերից ստացվող տնտեսական շահից»⁵⁴։

Այժմ մի փոքր հանգամանորեն դիտարկենք բուն Սուլթանթ-Ղրիմի հայկական հոգևոր կառույցները։ Դրանցից ամենանշանավորը Ս. Աստվածածին եկեղեցին էր, որի մասին հիշատակում են XIV դ. քաղաքում գրված բազմաթիվ հայկական ձեռագրեր⁵⁵։ Ս. Աստվածածին եկեղեցու մասին մեզ հասած առաջին տեղեկությունը վերաբերում է 1332 թ.⁵⁶։ Վերջին հիշատակարանը եկեղեցու մասին վերաբերում է 1688 թ.։ Այնտեղ ասված է.

49 Ժ. Դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 467-468։

50 Նույն տեղում, էջ 487։

51 Մ. Մաչողի անվան Մատենադարան (ՄՄ), ձեռ. N 7442, էջ 282ա։ Վ. Ա.

Միքայելյան, նշվ. աշխ., էջ 106-110, տե՛ս նաև Վրթ. Կաֆտյեցու Պարոն-Լույսի նահատակությունը նվիրված տաղը. ՄՄ, ձեռ. N 2939, թ. 465 և Կ. վրդ. Կոչոբյանի նշվ. աշխ., էջ 142-149։

52 Ж. Р о о м. Указ. соч., с. 47։

53 Վ. Ա. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 17։

54 Նույն տեղում, էջ 29-30։

55 Ժ. Դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 336, 340, 402, 427 և այլն։

56 Նույն տեղում, էջ 253։

«Արդ գրեցաւ սա ի գիւղաքաղաքին Ղրիմու առ ոտս սուրբ Աստուածածնին»⁵⁷: Հաջորդը Մ. Բժշկյանի տեղեկութիւնն է, որը եկեղեցին որակում է որպէս «Հնաշեն և անշուք»⁵⁸: Հայտնի է, որ Հին Ղրիմի ռատուշայի նորընտիր անդամները երդում են տվել քաղաքի հայկական եկեղեցում⁵⁹, այսինքն՝ գործող Ս. Աստվածածնի եկեղեցում: Հոգևոր այս կառույցի մասին թուղթիկ ակնարկում են նաև Հ. Տեր-Աբրահամյանը և Գ. Այվազովսկին⁶⁰:

1904 թ. հոկտեմբերին Հին Ղրիմի հայկական համայնքի անդամները դիմում են տեղական իշխանութիւններին և Հայ առաքելական եկեղեցու Նախաջեմա-Բեսարաբիայի թեմական առաջնորդարանին, խնդրելով թուղթ տալ ստեղծել հոգաբարձուների խորհուրդ, գումար ժողովել և վերականգնել եկեղեցին⁶¹: Թուղթովութիւնը ստանալուց հետո կազմվում է նախագիծ: Ղրիմի կենտրոնական պետական արխիվում պահվում է այդ նախագիծին կցված բացատրագիրը, որում մանրամասնորեն նկարագրված է եկեղեցին, ինչպես նաև նախանշված են այն ձևափոխութիւնները, որ պիտի կատարվեին վերակառուցման ընթացքում: Բացատրագրում ասված է. Հին Ղրիմ քաղաքի հայկական եկեղեցին ներկայումս ուղղանկյունաձև է և կազմված է բեմից, կենտրոնական մասից և սեղանատնից: Կենտրոնական մասի վերելում կա ոչ մեծ լուսանցաթմբուկ (փայտյա): Կենտրոնական մասի պատի հաստութիւնը 0,55 սաժեն է, իսկ մնացածներինը՝ 0,42 սաժեն: Եկեղեցին գերանածածկ է, հատակը 0,5 սաժեն գետնից ցածր է: Եկեղեցու վերակառուցումը արտահայտվելու է հետևյալ ձևով: Նախագծի հին ձևը, բացառութեամբ բեմի հատվածի, պահպանվելու է: Սեղանատան և բեմի պատերը կրկին վերաշարվելու են, ինչպես նաև արևմտյան կողմից կառուցվելու է զանգակատուն՝ աստիճանավանդակով: Թմբուկը փոխարինվելու է նոր քարե թմբուկով, որը գրվելու է գրանիտե չորս սյուների վրա... Եկեղեցու հատակը երեք աստիճանով բարձրացվելու է գետնի մակերեսից: Պատերը շարվելու են քարով՝ կրաշաղախով⁶²: 1905 թ. աշնանը վերականգնողական աշխատանքները լրիվ ավարտվում են⁶³: Այս ժամանակաշրջանում արված մի լուսանկարում Հին Ղրիմի հայկական եկեղեցին ներկայանում է որպէս վեհաշուք, հայկական ազգային ճարտարապետութեանը հարազատ մի կառույց (նկ. 2): Ա. Աստվածածինը գտնվելիս է եղել ներկայիս քաղաքային շուկայի մերձակայքում, այսօրվա Օսիպենկո ճ հասցեում գտնվող անշուք շինութեան տեղում: Եկեղեցու շուրջը եղել է գերեզմանոց: Տասպանաքարերից երկուսի վրա հայերեն վիմագրեր են եղել⁶⁴: 1920-ականներին կազմված Հին Ղրիմի Ս. Աստվածածին եկեղեցուն պատկանող շարժական և անշարժ գույքի ցուցակներում ներառնված են մի քանի բնակելի տներ, խանութներ Հին Ղրիմ քաղաքում, 3/4 գեսյատին տարածքով խաղողի այգի Օթուղ գյուղի մոտ, հողատարածք իգյուղով կա գյուղի մոտ, եկեղեցական ծառայութեան համար նախատեսված արծաթյա իրեր, ձեռագրեր, գրքեր, սրբապատկերներ, հագուստ, կահույք և այլն⁶⁵: Եկեղեցին պայթեցվել է 1960-ականների սկզբին:

57 Հ. Ս ու լ թ ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 74:

58 Մ. Բ ժ շ կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 322:

59 Վ. Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 250:

60 Հ. Տ եր - Ա բր ա հ ա մ յ ա ն. Պատմութիւն իրիմու. մաս 2, Թեոդոսիա, էջ 168, Г. А й в а з о в с к и й. Остатки христианских древностей в Крыму. — ЗООИД, т.1, 1844, с. 324; о н ж е. Остатки христианских древностей в Крыму. — Сурб-Хач. Симферополь, N1, 1997, с. 37.

61 ЦГА Крыма, ф. 27, оп. 13, д. 3349, л. 1.

62 Ն ու լ ն տեղում, թ. 7:

63 Ն ու լ ն տեղում, թ. 9:

64 Մ. Բ ժ շ կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 322:

65 ЦГА Крыма, ф. 27, оп. 13, д. 3349, л. 1.



Մ. 2

մի Հիշատակարանում⁶⁶: Այնուհետև այս կառույցը Հիշատակվում է 1356 թ.⁶⁷: Մ. Բժշկյանի նկարագրության համաձայն, Լուսավորչի եկեղեցին քաղաքի հայկական եկեղեցիներից ամենից մեծն էր և գտնվում էր նախկին շուկայի մոտ, ներկայիս տեղադրությունը՝ Լենինի և Սվոբոդա փողոցների խաչմերուկի մերձակայքում: Սրա շուրջ ևս հայատառ վիճագրերով գերեզմանաքարեր են եղել: Գրիգոր Լուսավորչի եկեղեցին Մ. Կրամարովսկու կազմած հատակագծում բացակայում է:

Ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող մյուս երկու հուշարձաններից (ըստ Բժշկյանի՝ Ս. Ստեփանոսը և Ս. Կարապետը) միայն մեկն է պահպանվել, այն էլ մասամբ: Դատելով Բժշկյանի նկարագրությունից, դա պիտի որ Ս. Կարապետը լինի: Այս կիսավեր մատուռի պատկանելությունը հայ առաքելական եկեղեցուն, որոշ ուսումնասիրողների կողմից անհիմն կերպով կասկածի տակ է առնվում⁶⁸: Դրան հավանորեն նպաստել է նաև տեղաբնակների ունեցած այն վկայությունը, թե մատուռում, ինչպես նաև նրան հարակից եկեղեցում, այսինքն՝ Ս. Ստեփանոսում, որը քանդվել է 1930-ականների վերջին, պատարագել են ուղղափառները, հիմնականում հույները:

Ղրիմ քաղաքում զրված հայկական ձեռագրերը հայոց Ս. Ստեփանոս եկեղեցին բազմիցս են հիշատակում⁶⁹: Առաջին անգամ այս եկեղեցու

Բազմաթիվ միջնադարյան ձեռագրերում Սուրխաթի Ս. Սարգիս եկեղեցին, որի անվանը առաջին անգամ հանդիպում ենք 1352 թ. մի Հիշատակարանում, ներկայացվում է Ս. Աստվածածնի հետ միասին⁶⁶: 1371 թ. Ս. Սարգսի «վերստին» նորոգված լինելու հանգամանքը⁶⁷ հուշում է, որ այն կառուցվել է առնվազն XIV դ. սկզբներին: Եկեղեցու մասին պահպանված վերջին հիշատակությունը հանդիպում ենք 1381 թ.⁶⁸: Ինչպես ասվեց, քաղաքի մուտքի մոտ գտնվող երկու եկեղեցիներից մեկը հաստատապես Ս. Սարգիսն է շուրջը հայատառ վիճագիր տապանաքարերով⁶⁹: Մյուս եկեղեցու վերաբերյալ որևէ տեղեկություն հայտնի չէ:

Սուրխաթի Գրիգոր Լուսավորչի եկեղեցու անվանը առաջին անգամ հանդիպում ենք 1346 թ.

66 Ժ. Դ. Գարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, էջ 399, 398, 496-497, 518:

67 Նույն տեղում, էջ 496-497:

68 Նույն տեղում, էջ 538:

69 А. М а р к е в и ч. Указ. соч., с. 125.

70 Ժ. Դ. Գարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, էջ 350:

71 Նույն տեղում, էջ 419:

72 А. М а р к е в и ч. Указ. соч., с. 125.

73 Նույն տեղում, О. Д о м б р о в с к и й, В. С и д о р е н к о. Указ. соч., с. 34; М. Г. К р а м а р о в с к и й. Указ. соч., с. 146.

74 Ժ. Դ. Գարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, էջ 421, 461, 419:

անվանը հանդիպում ենք 1356 թ. երկու հիշատակարաններում⁷⁵: Ս. Կարապետի անվանը հանդիպում ենք միայն Մ. Բժշկյանի վերը բերած նկարագրության մեջ: Եկեղեցիներից մեծը՝ Ս. Ստեփանոսը, կանգնած է եղել ներկայիս ծխախոտի պահեստի շինության տեղում: Փոքրը՝ Ս. Կարապետը, գտնվում է այդ շինությանը կից, Օսիպենկո և Կոսենկո փողոցների միջև: Սա կոպտատաշ քարից շինված, թաղակապ, փոքր միանավ բազիլիկ կառույց է, որին արևմուտքից ուղղանկյուն գավիթ է կցված: 1968 թ. մի խումբ մասնագետներ (Յու. Թամանյան, Ա. Մնացականյան, Է. Կորիմագյան, Ն. Սայկո), ելնելով կառույցի ճարտարապետական նկարագրից, շարժ տեխնիկայից, այն դասել են Ղրիմի հայկական հուշարձանների շարքը⁷⁶: 1980-ականներին մատուռի շրջակայքում պեղումներ է կատարել Մ. Կրամարովսկին: Նա գրում է. «Բազիլիկը ծածկում է հողաթումբ դերեզմանոցը (բացված են XIV դարի 36 թաղումներ)»⁷⁷: Հնարավոր է, որ այսօրինակ թաղումները այդ ժամանակաշրջանում մոլեզնոց համաճարակի հետևանք լինեն, համաճարակ, որի մասին 1347թ. ակնարկում է Նատերը⁷⁸:

XIX դ. վերջի և XX դ. սկզբի արխիվային փաստաթղթերը, ինչպես նաև տարիքավոր տեղաբնակները վկայում են, որ այդ շրջանում հայկական եկեղեցու, այսինքն Ս. Աստվածածնի մոտ գտնվող եկեղեցին և դրան հարակից մատուռը, ըստ Մ. Բժշկյանի Ս. Ստեփանոսը և Ս. Կարապետը, հույների ձեռքին են եղել: Փաստորեն, XIX դ. երկրորդ կեսին քաղաքի հայկական և հունական դործող եկեղեցիները կանգնած են եղել իրարից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա: Դավանաբանական տարբեր պատկանելություն ունեցող եկեղեցիների նման դիրքագրությունը այս ժամանակաշրջանում հնարավոր էր, քանի որ քաղաքը սակավաբանակ էր, հայկական ինքնավարությունը վերացվել էր և հուշարձաններին մեծ մասն անտեր էր մնացել, բայց անհնարին է պատկերացնել, որ XIV-XV դդ. հույներն իրենց եկեղեցին կամ եկեղեցիները կառուցեին հայկական թաղամասում, հայկական եկեղեցիների կողքին: Հայերն էլ, իրենց հերթին, չէին մտնի հունական եկեղեցիների միջավայրը: Ղրիմում այս երկու ժողովուրդները դավանաբանական հողի վրա մշտական վեճերի մեջ են եղել⁷⁹: Նիկողայոս Մաղկարարը XVII դ. կեսերին գրած իր մի հիշատակարանում պատմում է դավանաբանական հողի վրա Բախչիսարայի հայերի և հույների միջև տեղի ունեցած զինված ընդհարման մասին, որի հետևանքով ավերվել էր տեղի հայկական Ս. Աստվածածնի եկեղեցին⁸⁰: 1801 թ. մարտին հայոց եկեղեցու վարդապետ Ղազարը դիմում է Ակմեջիթի (Սիմֆերոպոլ) դավառային դատարան, բողոքելով հույների դեմ, որոնք այդ միջոցին՝ Հին Ղրիմում հայկական ինքնավարության կազմավորման ընթացքում, ցանկանում էին վերականգնել Հին Ղրիմի հունական եկեղեցին և վերահաստատվել քաղաքում:

Բազմազգ բնակչություն ունեցող միջնադարյան այս բնակավայրում յուրաքանչյուր էթնիկ խումբ ապրում էր առանձնացած, հարաբերականորեն ինքնուրույն կյանքով⁸²: Ակնհայտ է, որ Հին Ղրիմի այս թաղամասը իր եկեղեցիներով հանդերձ պատկանել է հայերին, քանի որ մյուս եկեղեցիների հայկական ծագումը կասկած չի հարուցում: Հույները միայն հե-

75 Նույն տեղում, էջ 419, 421:

76 А. Л. Якобсон, Ю. А. Таманян. Указ. соч., с. 48.

77 М. Г. Крамаровский. Указ. соч., с. 146.

78 Ժ. Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 358:

79 Заметки XII—XIV века, относящиеся к крымскому городу Сугдае..., с. 609.

80 Հայերեն ձեռագրերի Ժ. Դարի հիշատակարաններ, մաս Գ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 714:

81 ЦГА Крыма, ф. 67, оп. 1, д. 2, л. 1, 2.

82 О. Домбровский, В. Сидоренко. Указ. соч., с. 41.

տազայում են զբաղեցրել հայկական եկեղեցին հարակից մատուռի հետ միասին և հարմարեցրել դրանք իրենց ծեսին: Ուստի, եկեղեցու հունական լինելու մասին Կրամարովսկու ենթադրությունը վստահություն չի ներշնչում, քանի որ այն հաշվի չի առնում ժամանակին հուշարձանի շրջակայքում հայերեն վիմագրերով տապանաքարերի գոյությունը⁸³: Այդ տապանաքարերի գոյությունը վերաբերյալ Ա. Մարկևիչի տեղեկությունը⁸⁴ հուշարձանի հայկական ծագման լավագույն հավաստիքն է: Ուշագրավ է այն, որ Մարկևիչի նկարագրության մեջ Ս. Ստեփանոս եկեղեցին որևէ կերպ հիշատակված չէ, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ այն XIX դ. վերջին հիմնովին քանդված է եղել և վերակառուցվել է միայն XX դ. սկզբներին:

Թվարկված հուշարձաններից բացի միջնադարյան Սուրխաթում եղել են նաև հայկական այլ եկեղեցիներ՝ Ս. Հարությունը, Ս. Միմեոնը, Ս. Գևորգը⁸⁵: Միջնադարյան քաղաքի հյուսիս-արևելյան ծայրին, Կաֆա տանող ճանապարհի կողմը բացվող դարպասներին մերձակա, կամրջի մոտ էր գտնվում Աստվածածին Չարխափան եկեղեցին⁸⁶: Կամուրջը վերակառուցվել է և մինչև օրս էլ գոյություն ունի, իսկ եկեղեցին չի պահպանվել: XIX դ. վերջին Աստվածածին Չարխափանը իր շրջակայքով հանդերձ պատկանում էր Հովհաննես Այվազովսկու քրոջը Աննա Այվազյանին, որը պատրաստվում էր վերականգնել եկեղեցին⁸⁷: Արխիվային փաստաթղթերում պահպանվել է վերականգնված եկեղեցու լուսանկարը: Այստեղ հուշարձանը հանդես է գալիս ս. Աննա անունով: Հանուն հավատի նահատակված ս. Աննայի անունը վերցվել է հավանաբար ի պատիվ Աննա Այվազյանի: XX դ. 20-ականներին տեղական իշխանությունները պատրաստվում են քանդել այս հուշարձանը և շինանյութը օգտագործել այլ նպատակներով: Հուշարձանների պահպանությունը գրադվող մարմինները ստիպված են լինում վերադասին հիշեցնել, որ սա XIV դ. կառույց է, պատմական արժեք է ներկայացնում և հուշարձանների պահպանության վերաբերյալ Կենտրոնիկոմի և ՌՍԾՍՀ Ժողովուրդի 1924 թ. հունվարի 7-ի որոշման համաձայն ենթակա է պահպանության⁸⁸: Չարխափան եկեղեցին կամ Ա. Աննայի մատուռը վերջնականապես ավերվել է Հայրենական պատերազմի նախաշեմին: Այն գտնվում էր ներկայիս անասնաբուժարանի մերձակայքում և տեղանքի հնագիտական պեղումները կարող են հետաքրքրական նյութ բացահայտել:

Ք. Սպասկու վկայությամբ, քաղաքում XIX դ. երկրորդ կեսին գործող ռուսական եկեղեցին կանգնեցված էր հայկական եկեղեցու տեղում⁸⁹: Վերջինս ժամանակին պալատի էր վերածվել Եկատերինա II-ի ընդունելության համար, մինչև 1800 թ. ծառայել է որպես ռուսաց արքեպիսկոպոսների նստավայր, իսկ այնուհետև՝ դարձել ռուսական եկեղեցի⁹⁰: 1825 թ. հուշարձանն այրվել է և քանդված մնացել մինչև XIX դ. վերջը: Շուրջը հայերեն և լատիներեն գրերով տապանաքարեր են եղել⁹¹:

83 М. Г. Крамаровский. Указ. соч., с. 146.

84 А. Маркевич. Указ. соч., с. 125.

85 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 418, 419:

86 Մ. Բ ժ շ կ ե ա ն, նշվ. աշխ., էջ 323:

87 Ք. վրդ. Ք ու շ ե յ ա ն. նշվ. աշխ., էջ 107; А. Маркевич. Указ. соч., с. 125—126.

88 ЦГА Крыма, ф. Р—663, оп.10, д. 881, лл. 1, 2, 4, 7.

89 Г. С п а с с к и й. Старый Крым.— ЗООИД, т. IV, Одесса, 1860, с. 90.

90 Նույն տեղում: Г. А й в а з о в с к и й. Остатки христианских древностей в Крыму.— ЗООИД, т. 1, Одесса, 1844, с. 324; Его же статью см. Сурб Хач, 1997, N1, с. 37.

91 Г. С п а с с к и й. Указ. соч., с. 90.

Քաղաքի շրջակայքում բազմաթիվ հայկական վանքեր են եղել: Հին Ղրիմից Յ կմ հարավ-արևելք, անտառախիտ լեռնալանջին մինչև օրս էլ կանգուն է զրիմահայոց աթոռակալ վանքը՝ Սուրբ Խաչը: Դրանից քիչ հեռու Ս. Ստեփանոս վանքի ավերակներն են: Այս հուշարձանի հնագիտական հետազոտությունը առաջինը զբաղվել են Օ. Դոմբրովսկին և Վ. Միդորենկոն: Ընդհանրապես, արևելքում եռախորան եկեղեցու և դրան արևմուտքից կցված ուղղանկյուն դավթի ավերված պատերից բացի, հայտնաբերվել են նաև վանքի շրջապարսպի դրվագներ, տնտեսական և բնակելի շինությունների մնացորդներ, խեցեղեն և այլն⁹²: Հուշարձանը պեղել է նաև Ֆ. Բաբայանը⁹³:

Սուրխաթին մոտ էին դտնվում նաև Ս. Ստեփանոսի վանքը, որ կոչվում էր նաև Հայր Հովհաննեսի անապատ⁹⁴. Ս. Գևորգ վանքը «առ ստորտով Ղրիմ մայրաքաղաքիս»⁹⁵, Շահնազ դյուղի Գրիգոր Լուսավորիչը «ի գաւառս Ղրիմ մայրաքաղաքի»⁹⁶ և այլն:

Քաղաքում, Լենինի և Գորկու փողոցների խաչմերուկում, վերակառուցված վիճակում մինչև օրս էլ դեռ կանգուն է Բենկլյանցների տունը: Մի քանի տասնամյակ առաջ միայն XX դ. 50-ականներին քանդվեց Գոլովա (քաղաքագլուխ) Օվանեսի տունը: Քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասային հողատարածքները XIX դ. երկրորդ կեսին պատկանում էին Հովհաննես Սյվաղովսկուն⁹⁷: Նրա ամառանոցային առանձնատունը մինչև օրս էլ կանգուն է: Այս տանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կարճ ժամանակով հանգրվանել է Մլեքսանդր Սպենդիարյանի ընտանիքը⁹⁸:

Կրկին անգրագատնանք քաղաքի անվանումներին: Այն հանգամանքը, որ մահմեդական թաթարները խուսափել են «Սուրխաթ» կամ «Սուխաթ» անվանումը կիրառելուց, Վ. Սմիրնովին թույլ է տվել այս անվան ծագումը կապել մոտակա լեռնալանջին գտնվող հայկական Սուրբ Խաչ վանքի անվան հետ: Նրա կարծիքով, Սուրխաթ-Սուխաթ Սուրբ Խաչի աղավաղված ձևն է: Սմիրնովը անվան աղավաղումը կապում է ջենովացիների հետ, որոնք չունենալով «թ» տառը, այն փոխարինել են «tch»-ով, այնուհետև սղել բառամիջի «բ»-ն և բառավերջի «ch» հնչյունները⁹⁹: Այս տեսակետին հավանություն են տվել Ա. Յակոբսոնը, Օ. Ակչոկրակլին, Հ. Սուրխաթյանը, Քերովե Բուչներյանը և այլք¹⁰⁰: Սակայն, ինչպես տեսանք վերը, «Սուրխաթ» տեղանունը տարբեր ձևերով հանդես է գալիս դեռևս մինչև Տավրիկայում թաթարների և ջենովացիների հաստատվելը: Հետևաբար, անվան ինչպես ծագումը, այնպես էլ աղավաղումը պետք է կապել թերակղզու մինչթաթարական և մինչջենովական շրջանի բնակչության հետ: Օ. Դոմբրովսկին և Վ. Արդորենկոն չեն համաձայնվում Սմիրնովի տեսակետի հետ, պատճառաբանելով, որ «Սուրխաթ» և «Սուրղաթ»

92 О. Д о м б р о в с к и й, В. С и д о р е н к о. Указ. соч., с. 109—115.

93 Ф. С. Б а б а я н. Об археологических исследованиях средневековых монастырей Сурб Хач и Сурб Степанос. — В сб: Археологические исследования в Крыму. Симферополь, 1995.

94 Ք Դ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 586:

95 Նույն տեղում, էջ 442:

96 Նույն տեղում, էջ 504-505.

97 А. М а р к е в и ч. Указ. соч., с. 125—126.

98 Մ. Ս պ ե ն դ ի ա Ր ո վ ա. Սպենդիարով. Երևան, 1966, էջ 112:

99 В. Д. С м и р н о в. Археологическая экскурсия в Крым летом 1886 года. — Записки Восточного отдела Императорского русского археологического общества. Т. 1, вып. 4, с. 287.

100 О. А к ч о к р а к л ы. Указ. соч., с. 7; Ք. վ Ր դ. Ք ու չ ն եր յ ա ն. նշվ. աշխ., էջ 107. Հ. Ս ու Ր խ ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 71, А. Л. Я к о б с о н. Указ. соч., с. 168; А. Л. Я к о б с о н, Ю. А. Т а м а н я н. Указ. соч., с. 8.

ձևերը հանդես են գալիս միայն հայկական աղբյուրներում¹⁰¹: Ահա այստեղ է, որ պետք է խոսել ջենովացիների մասին: Ջենովացիներից մնացել է ոչ թե «Սուրխաթ-Սոլխաթ» ձևը, այլ «Սոլխաթ-Սոլգաթը»: Նրանք, չունենալով «ղ» և «խ» հնչյունները, «Սոլխաթ» գրելիս կամ արտասանելիս դրանք փոխարինել են «ցի» և «կի» տառակապակցություններով: Ժամանակի ընթացքում «ի»-ը սղվել է. ստացվել է Սոլխաթ կամ Սոլգաթ: Նույնը կարելի է ասել նաև թաթարների վերաբերյալ: Սրանք, ինչպես նշում է Ա. Գարկավին, դիմելով իբն Բատուտի վկայությունը, չէին կարողանում հստակ արտասանել կոկորդային հնչյունները. «խ»-ն հնչեցնում էին «կ», իսկ «ղ»-ն՝ «գ»¹⁰²: Փաստորեն այս վերջին երկու ձևերը «Սոլխաթ» և «Սոլգաթ», իրենցից ներկայացնում են ավելի ուշ շրջանի ձևափոխություններ: Տեղանվան ձևափոխությունները հերթագայվել են հետևյալ կերպ. Սուրբ Խաչ → Սուրխաթ (Սուրղաթ) → Սոլխաթ (Սուլղաթ) → Սոլխաթ (Սոլղաթ) → Սոլխաթ (Սոլղաթ): Տեղանվան բազմաթիվ ձևափոխությունները վկայում են այն մասին, որ լեզուն, որով հնչել է բնօրինակը, բացարձակապես անծանոթ է եղել տեղական բնակչությանը: Տեղանվան թյուրքական կամ լատինական ծագման դեպքում չէին առաջանա այսքան ձևափոխություններ, քանի որ այս լեզուները շատ թե քիչ ծանոթ էին տեղական բնակչությանը:

Սուրբ Խաչ վանքը, որի անվան հետ Սմիրնովը կապում է «Սուրխաթ» տեղանունը, իր անվանումը ստացել է Սուրբ Խաչ կոչվող խաչքարից, որը առաջին հայ վերաբնակների կողմից բերվել է Հայաստանից և դարեր շարունակ պահվել մոտակա լեռնալանջին գտնվող վանքում¹⁰³: 1778 թ. արտագաղթի ժամանակ հայերը խաչքարը Ղբիմից տեղափոխել են մերձդոնյան տափաստաններ և տեղադրել այնտեղ հիմնադրված Սուրբ Խաչ վանքում¹⁰⁴: Սա վկայում է այս սրբության հանդեպ հայերի բացառիկ վերաբերմունքի մասին: Թե ինչպես են հայերը կոչել լեռան ստորոտում գտնվող իրենց դրիմյան բնակավայրը, հայտնի չէ, բայց շրջակա բնակչության պատկերացմամբ այդ բնակավայրում սպրել են մարդիկ, որոնք բերել և երկրպագել են լեռնալանջերին գտնվող Սուրբ Խաչ, իրենց արտասանությամբ՝ Սուրխաթ, Սոլխաթ կոթողը: Ուրեմն, աղավաղված անվանումը սկզբում վերաբերել է կոթողին և վանքին, իսկ այնուհետև տարածվել բնակավայրի վրա:

Ուշագրավ է այն, որ հայկական միջնադարյան երկու աղբյուրներում աղավաղված «Սուրխաթ» անվանումը կիրառվում է վանքի վերաբերյալ: Նիկողայոս Ծաղկարարի վերը բերված հիշատակարանի շարունակություն մեջ ասվում է, թե Բախչիսարայի ավերված եկեղեցու առաջնորդը՝ Հովհաննեսը, եկեղեցու վերականգնումը մի կողմ թողած շտապում էր ուխտագնացության դեպի Երուսաղեմ: Մի քանի տարի շարունակ Ղբիմի և Երուսաղեմի հայ հոգևորականները ընդդիմանում էին այս ուղևորությանը: Բանը հասնում է այնտեղ, որ գալիս է «յաջորդ Սուրխաթոյ արքեպիսկոպոսն», ժողով է հրավիրում Կաֆայի Ս. Սարգիս եկեղեցում: Արդյունքում գումար են ժողովում, եկեղեցին նորոգում, որից հետո միայն Հովհաննեսը մեկնում է ուխտագնացության¹⁰⁵: Վերոհիշյալ իրադարձությունների ընթացքում արքեպիսկոպոս Խաչատուրին փոխարինում է Հաջորդ արքեպիսկոպոս Գրիգորը, որը իբ նախորդի պես աթոռակալում էր Սուրբ Խաչ

101 О. Домбровский, В. Сидоренко. Указ. соч., с. 25.

102 А. Гаркави. Указ. соч., с. 55.

103 Տ. Սարգսյան. Ղբիմի Սուրբ Խաչ վանքը և նրա նորահայտ վիճակները. — ՊԲՀ, 1999, N 2-3, էջ 311-323:

104 С. Хачикян. Хачкар Сурб Хач вновь в Сурб Хаче. — "h"амайнк (Историко-филологический журнал). Вып. 6, Пятигорск, 1997, с.28.

105 Հայերեն ձեռագրերի ժե գարի հիշատակարաններ, մաս 9, էջ 714:

չում¹⁰⁶: Նիկողայոս դրիչը, «յաջորդ Սուրխաթոյ արքեպիսկոպոսն» ասելով ի նկատի ունի հենց Սուրբ Խաչում աթոռակալող տեր Խաչատուրի Հաջորդին արքեպիսկոպոս Գրիգորին: Հաստատապես կարելի է ասել, որ հիշատակարանի հեղինակն այստեղ «Սուրխաթ» բնակավայրի մասին չի խոսում, քանի որ վանքը այդ բնակավայրից դուրս էր և ոչ էլ՝ արևելյան, երբեմն «Սուրխաթ» կոչվող երկրամասի, քանի որ արքեպիսկոպոսը ոչ միայն այդ երկրամասի, այլև, համաձայն հիշատակարանների, ընդհանրապես հյուսիսակողմ նահանգի աթոռակալն էր: Ակնհայտ է, որ Նիկողայոս Ծաղկարարն ի նկատի է ունեցել Սուրբ Խաչ վանքը, բայց անվանումը ներկայացրել է աղավաղված տարբերակով: 1438 թ. Ֆլորենցիայի տիեզերաժողովին իրենց մասնակցությունը բերելու կապակցությամբ ղրիմահայերը մի նամակ են հղում ամենայն հայոց կաթողիկոս Կոստանդին Վահագուն՝ տիեզերաժողովին մասնակցելու համար հայ հոգևորականների ցուցակով հանդերձ: Փաստաթղթում կետ առ կետ նշված են հոգևորականների անունները և այն եկեղեցիների կամ վանքերի անվանումները, որոնք նրանք ներկայացնում են: Ի թիվս այլոց ցուցակում ներկայացված է նաև ոմն «Զորապետ երեց Սուրղադա»¹⁰⁷:

Հնագույն քարտեզները ցույց են տալիս, որ Սուրխաթ բնակավայրը բաղկացած է եղել երեք հիմնական մասից: Իրենց չափերով նշանակալից էին քրիստոնեական և մահմեդական մասերը: Երրորդ մասը փոքր էր: Այստեղ էր հուդայական դպրոցը, որի ավերակները մինչև օրս էլ կանգուն են: Փաստորեն, արդեն XIV դ. վերջին Սուրխաթ-Ղրիմը իրենից, այսպես ասած, քաղաք-ազլումերացիա է ներկայացրել, որի յուրաքանչյուր մասը բնակեցված է եղել իր միատարր բնակչությամբ: Օ. Դոմբրովսկին և Վ. Սիդորենկոն դրում են. «Հենվելով ջենովական փաստաթղթերի վրա, կարելի է ենթադրել Ղրիմ-Սուրխաթի բավականին երկարատև բաժանումը երկու մասի՝ ջենովականի (բուն Սուրխաթ) և թաթարականի՝ «Ղրիմ» բառի նեղ հիմաստով»¹⁰⁸:

Օտարազգի մասնադետներին դեռևս հայտնի չեն հայկական աղբյուրները, հակառակ դեպքում նրանք Սուրխաթում չբնակված ջենովացիների համար քաղաքում առանձին հատված չէին հատկացնի: Ավելի ճիշտ կլիներ քաղաքը բաժանել քրիստոնեական Սուրխաթ-Սուրխաթի և մահմեդականի: Ինչևէ, հայկական աղբյուրներին ծանոթ չլինելու հանդամանքը իր լուրջ բացասական հետևանքն է ունեցել Սուրխաթ-Ղրիմի պատմության ուսումնասիրության վրա: Բնակավայրի վերաբերյալ չըջանառության մեջ դտնվող տեղեկությունների հիմնական մասը թողել են տարբեր աղբյուրների ճանապարհորդներ, որոնց նկարագրությունները և վկայությունները արդյունք են կարճաժամկետ, թուուցիկ այցելությունների, մինչդեռ հայկական աղբյուրների հեղինակները տեղի բնակիչներն են, իրողություններին ու իրադարձություններին քաջատեղյակ անձինք:

106 Նույն տեղում, XVII դ. 40-ականների վերջին և 50-ականների սկզբին Կաֆայում գրված ձեռագրերը, օր. էջ 20, 90, 167, 287, 397, 531. մաս Բ, էջ 642, 858:

107 Հայ-իտալական առնչություններ, էջ 32:

108 Օ. Д о м б р о в с к и й, В. С и д о р е н к о. Указ. соч., с. 26.

АРМЯНЕ СРЕДНЕВЕКОВОГО СУРХАТА И ИХ ЦЕРКВИ

TATEVIK SARGSYAN

Резюме

По мнению многих авторитетных ученых (А. Л. Бертье-Делагард, А. Л. Якобсон, Х. А. Поркшеян), в таврическом (ныне – крымском) городе Сурхат (Солхат, Солкат, Крым, Эски Крым, ныне – Старый Крым), задолго до появления татар, существовало армянское население. В. Смирнов, А. Якобсон, А. Сурхатян и др. связывают название этого населенного пункта с находящимся поблизости армянским монастырем Сурб Хач. Во второй половине XIII в. татары, появившиеся на полуострове к 40-м годам того же века, рядом с Сурхатом обосновали административный центр местного улуса, назвав его, как и полуостров – Крым. В 60-х годах XIII в. на восточном побережье Крыма генуэзцы обосновали свои торговые колонии. В свое торгово-экономическое предпринимательство они вовлекли и местных жителей, в первую очередь армян. Татары стремились извлечь свою выгоду из этой ситуации и контролировать торговлю, что в общем им удавалось. Активно действовавшая торговая система привела к быстрому росту Сурхата и Крыма. Вскоре эти два населенных пункта слились в одно целое – город Сурхат-Крым. В Сурхате, по сообщениям источников XIV в., армяне имели свой квартал – Верхние землянки или Чхбнис, в котором существовало более шести армянских церквей. М. Бжшкян, Хр. Кушнерян и другие локализуют верхний армянонаселенный квартал Сурхата на близлежащих горных склонах, у подножья монастыря Сурб Хач, видимо, полагая, что тот не мог существовать на территории центра улуса, рядом с татарскими мечетями. Сравнительный анализ названий и местонахождения сурхатских духовных сооружений, упомянутых в источниках XIV в., и церквей, фигурирующих в описаниях этого города, составленных в XIX в. М. Бжшкяном и А. Маркевичем, дает основание локализовать армянский квартал в самом Сурхате, в соседстве с татарскими мечетями и дворцами. Такое расположение армянских и татарских духовных сооружений, действовавших в одно и то же время, дает основание для следующих выводов: 1. Армяне проживали на этой местности задолго до появления татар и их духовные сооружения были построены по крайней мере до принятия татарами мусульманской религии. 2. Вклад армян в торгово-экономическую и культурную жизнь города был настолько велик, что татары не создавали им каких-либо препятствий.

THE ARMENIANS OF THE MEDIEVAL SURKHAT
AND THEIR CHURCHES

TATEVIK SARGSYAN

Summary

In the opinion of a number of authorities (A. Bertie-Delagard, A. Jakobson, A. Porksheyan), the Tavrian (Crimean) settlement Surkhat was populated with Armenians long

before the Tatars appeared here. V. Smirnoff related the name "Surkhat" with the Armenian monastery Surb Khatch (St. Cross) located in the settlement. Kh. Porksheyan even presumed, that Surkhat was founded by Armenians and was one of their earliest settlements in Tavrika. In the second half of XIII century the Tatars founded the administrative center of the local ulus of the Golden Horde beside Surkhat and named it the Crimea: a name they had given to the peninsula not long before. The Genovians founded trade colonies on the Eastern shore of the Crimea, which led to quick growth of the Surkhat and the Crimea settlements and brought about their unification into one city, rather big and prosperous for the Medieval Ages. Armenian manuscripts of XIV century, written in the Crimea make several references to the Armenian quarter of Surkhat, named Upper Groundmade Houses, with more than eight churches, standing at different points of it and about seven Armenian monasteries located not far from the city. Though the Armenian clergymen, travelling in the Crimea in XII century, saw many ruined Armenian churches in the Crimea, in their descriptions they located the Upper Quarter outside Surkhat, maybe because, in their opinion, ancient Christian buildings could not function next to medieval Tatar mosque. The old maps, representing Surkhat-Crimea also come to prove, that there were more than six churches in one of the districts of the city. A comparison of names and dispositions of the churches, mentioned in the documents of XIV century with those described by M. Bjskhyan and A. Markevich in XIX century, shows, that these were the same constructions. Such a disposition of the Armenian and Muslim spiritual institutions functioning at the same time in XIV century, leads us to the following conclusions: 1. Armenian churches of Surkhat were founded long before the Tatars adopted the Muslim faith, if not before their appearance on the peninsula. 2. Armenians' contribution in the economy, as well as in the culture of the city was so significant, that the Tatars did not create obstacles to them.